

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՂՈԹՔԻ ՕՐԸ տեղի

ունեցաւ Չորեքշաբթի 5 Մարտ, 2014-ին, առաւօտեան ժամը՝ 10.00-ին, Հայ Աւետարանական Բեթել Եկեղեցիին մէջ: Համաշխարհային աղօթքի օրուան նիւթն էր՝ «Վտակներ Անապատի Մէջ», հիմնուած՝ **Յովհաննու 4: 1-42**, որ պատրաստուած էր Եգիպտոսի Համաշխարհային աղօթքի օրուան յանձնախումբին կողմէ: Պաշտամունքը սկսաւ Բժշկի. Ալինա Մկրտիչեանի բարի գալուստի եւ ողջոյնի խօսքով: Պաշտամունքը կ'ընդգրկէր Աստուածաշունչի ընթերցանութիւն, երգեցողութիւն եւ աղօթքի պահեր: Յայտագրին վրայ իրենց մասնակցութիւնը բերին Հայ երեք Համայնքներու Տիկնանց Միութիւններ: Օրուան պատգամը մատուց Պատ. Միմոն Տէր Սահակեան, Հովիւ՝ Հայ Աւետ. Նահատակաց Եկեղեցիի: Ծանուցումները եւ նուիրահաւաքումը կատարուելէ ետք, պաշտամունքը վերջ գտաւ «Տէր Ռդորմեա» շարականի երգեցողութեամբ եւ Վերապատուելի Համայնքապետին Առաքելական օրհնութեան աղօթքով: Ապա ներկաները հիւրասիրուեցան Հայ Աւետարանական Բեթել Եկեղեցիի Տիկնանց Վարչութեան կողմէ եւ ունեցան հաղորդակցական պահ:

